

Պ Օ Է Տ

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԻԻԹԱՐԵԱՆՑԻ

Պօէտը մի օր գովում էր երկինք,
Երբ այնտեղ պայծառ փայլում է լուսին,
Երբ շողշողում են աստղեր զեղեցիկ
Կէսգիշերային խաղաղ ժամերին:
Եւ ես անտարբեր լըսում էի այն
Սահուն խօսքերի ներդաշնակութիւն,
Եւ հայեացքս երկինքս պօէտի նըման՝
Դիտում էի լուռ աստղերը փայլուն:
Եւ սառն էր իմ սիրտս, որպէս եթերքում
Սառն են և՛ աստղեր և՛ ամպ և՛ լուսին,
Որպէս լաւիտեան լուռ են երկընքում
Նոքա՝ այնպէս լուռ էր սըրտիս միջին:

Մի այլ օր պօէտն լուզւած, վրդովւած
Պատմում էր մարդոց մի գործ չարութեան,
Այնտեղ մի թըշուառ, անմեղ զոհ դարձած՝
Նահատակում էր անվերջ, անվախճան:
Եւ ես վրդովւած, պօէտի նըման՝
Լըսում էի այն տըխուր պատմութիւն,
Ես տեսնում էի մի վէրք մարդկութեան,
Հորւած ու թաղւած ոճրագործութիւն:
Եւ այրւում էր սիրտս, որպէս ահարկու
Այրւում են ցաւերն այն զոհի սըրտում,
Ես պատրաստ էի իմ կեանքս տալու՝
Թէ նա երջանիկ լինէր աշխարհում: